ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ

ԶՈՎՔԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զովք
համայնք, գ. Զովք գլխավոր խճ. 16 , zovq_gyux@mail.ru

31.08.2015թ.
N 74

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ՝
ՊԱՐՈՆ Կ. ԳՈՒԼՈՅԱՆԻՆ

01.09.2014 – 31.08.2015թթ. համայնքի ղեկավարի կողմից կատարված աշխատանքների հաշվետվությունը համայնքի բնակչությանը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ն. ԳԵՎՈՐԳՅԱՆ

Հարգելի Զովքեցիներ 2014 թվականի երկրորդ և 2015 թվական առաջին կիսամյակի ընթացքում համայնքի ղեկավարի և գյուղապետարանի աշխատակազմի կողմից կատարվել են հետևյալ աշխատանքները.

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

2013 թվականի դեկտեմբերի 20-ին համայնքի ավագանին իր N 32-Ն որոշմամբ ընդունել է 2014 թվականի բյուջեն, ըստ որի եկամուտները կազմել են 21 մլն 361 հազար 300 դրամ, ծախսերը՝ 21 մլն 361 հազար 300 դրամ:: Հողի հարկի չափը Զովքի վարչական տարածքում գտնվող հողի համար կազմել է 3 մլն 250 հազար դրամ: 2014թ. հողի հարկը հավաքագրվել է 3 մլն 456 հազար 260 դրամ, որը կազմում է տարեկան պլանի 106%-ը:

2014թ. գույքային հարկերը կազմել են 1 մլն 425 հազար, հավաքագրվել է 131%-ով, որը բացարձակ թվով կազմել է 1 մլն 868 հազար 935 դրամ:

2014 թվականի դեկտեմբերի 12-ին համայնքի ավագանին իր N 33-Ն որոշմամբ ընդունել է 2015 թվականի բյուջեն, ըստ որի եկամուտները կազմել են 80 մլն 658 հազար 100 հարյուր դրամ, ծախսերը՝ 80 մլն 658 հազար 100 դրամ:

Հողի հարկը կազմել է 3 մլն 100 հազար դրամ, որից առաջին կիսամյակում հավաքագրվել է 2 մլն 172 հազար 60 դրամ, որը կազմում է տարեկան պլանի 70%-ը:

Գույքային հարկերը կազմել են 1 մլն 430 հազար դրամ, որից առաջին կիսամյակում հավաքագրվել է 1 մլն 253 հազար 314 դրամ, որը կազմում է տարեկան պլանի 88%-ը:

.

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

Գյուղապետարանին օգնության խնդրանքով դիմած անապահով ընտանիքների խնդրանքը հիմնականում բավարարվել է՝ համայնքի անապահով ընտանիքներին տրվել է 970 հազար դրամի օգնություն:

ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԲՆԱԳԱՎԱՌ

Զովքի միջնակարգ դպրոցի աշակերտներին երեխաների պաշտպանության միջազգային օրվան նվիրված տրվել է 54 հազար դրամի ներկայացման տոմսեր, գործում է նաև գրադարանը:

ԲՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

Զովք համայնքի բյուջեից եռամսյակը մեկ վճարվում է բնապահպանական և բնօգտագործման վճար 7200 դրամ, ինչպես նաև աշխատավարձ է վճարվում աղբահանության ավտոմեքենայի վարորդին և տրամադրվում է գազի լիցքավորման կտրոն աղբը տեղափոխելու համար, որը կազմում է մոտ 1 մլն 550 հազար դրամ:

ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆԱԳԱՎԱՌ

Հսկողություն է իրականացվում առևտրի, հանրային սննդի և կենցաղային ծառայությունների ոլորտում գործող օբյեկտների նկատմամբ: Տրվել են ծխախոտի և ոգելից խմիչքի վաճառքի և իրացման 10 թույլտվություններ, որոնցից գանձվել են համապատասխան տուրքի գումարներ:

ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

Համայնքի բյուջեի միջոցներով կապիտալ վերանորոգվել է, վարչակ շենքի սանհանգույցը, ինչի համար ծախսվել է 985 հազար 813դրամ, հարթեցվել է խոտհարկներ տանող ճանապարհը,ինչի համար ծախսվել է 200 հազար դրամ, վերանորոգվել է մանկապարտեզի տանիքի մի մասը, ինչի համար ծախսվել է 500 հազար դրամ:

Սկսվել և ընթացքի մեջ են Զովք համայնքի հանդիսությունների սրահի հատակագծի նախագծման աշխատանքները, որի համար վճարվել է 850 հազար դրամ:

ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՈՂՆԵՐԻ ԲՆԱԳԱՎԱՌ

2014թ. հոկտեմբերի 24-ին և 2015թ. մայիսի 11-ին կայացել են Զովք համայնքի սեփականություն համարվող հողերի աճուրդներ, որոնց արդյունքում օտարվել են 5,97 հա տնամերձ հողեր: Աճուրդների արդյունքում համայնքի բյուջե է մուտք եղել 57 մլն 948 հազար 714 դրամ: